ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «14» հունվարի 2013 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 01-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԵՎ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1121 որոշմամբ՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման հիմնարար և կարևորագույն կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունների կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացման ամփոփ հաշվետվության Ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Վ. Գսպոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
«14» հունվարի N 01-Ա/Ք հրամանի

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԵՎ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Ի. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Ծրագրի

   անվանումը ____

   պայմանագրի համարը _____

   հաշվետվության ժամկետը «___» _____ 20__ թ.-ից մինչև «___ » _____ 20__ թ.
2. Կազմակերպության անվանումը, որտեղ իրականացվում է ծրագիրը ____
3. Կազմակերպության ղեկավարի

   ազգանունը, անունը, հայրանունը ____

   հեռախոսը _____ էլ. փոստը _____
4. Ծրագրի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները _____ հազար դրամ
5. Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը _____

ամսաթիվ _____

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

*Համառոտ նկարագրել իրականացված աշխատանքների արդյունքները՝ օրացուցային պլանով և պայմանագրով նախատեսված առաջադրանքին համապատասխան: Ներկայացնել հիմնական արդյունքները, դրանց արդիականությունը և գիտական կամ գիտատեխնիկական նորույթը (մինչև 20 էջ):

III. ԱՐՏՈՆԱԳՐԵՐ, ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Նկարագրել արդյունքները՝ արտոնագրեր, նոր տեխնոլոգիա, փորձնական կամ լաբորատոր նմուշ, ծրագրային փաթեթ, ալգորիթմ, բլոկ սխեմա, նախատիպ, մոդել, տպագրված և ավարտված այլ նյութեր՝ ատենախոսություններ, գիտական հրապարակումներ, գիտաժողովների զեկույցներ: Արտոնագրի դեպքում նշել հեղինակներին, երկիրը, դասիչը, անվանումը, սեփականատերը, ժամկետը: Հրապարակումների ցանկը ներկայացնել՝ նշելով հեղինակներին, վերնագիրը, ամսագիրը կամ հրատարակչությունը, տարին, հատորը, համարը, էջերը: Այլ տեսակի հրապարակումները ներկայացնել ամսագրերում ընդունված պահանջներին համապատասխան: Ատենախոսության դեպքում նշել հեղինակին, անվանումը, մասնագիտական դասիչը, թեկնածուականի դեպքում նաև ղեկավարի անունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը:

IV. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Ծրագրի իրականացման հետ կապված փաստացի ծախսերը*

h/h	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը (*հազար դրամ*)
1.	*ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ* (ներառյալ սոցիալական ապահովության վճարները)	
2.	*ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝* 1) սարքեր և նյութեր 2) գործուղումներ 3)ենթապայմանագրային համագործակցություն 4) այլ…	

Կազմակերպության ղեկավար՝ _____ _____
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____
(ստորագրություն) *(Ա.Ա.Հ.)*

*Կից ներկայացնել փաստացի ծախսերը հաստատող բոլոր փաստաթղթերը: